

կողմէ , մոռցուած ապերախտ Եւրոպայէ , բոլորովին սուգի եւ թշուառութեան մատնուելով արդէն թշուառացած Հայաստանը :

Այո՛ , ապերախտ կըսեմ Եւրոպային եւ կընդգծեմ . վասն զի չեմ կրնար ըմբռնել , թէ այսպէ՞ս պէտք էր վարձատրուիլ անձնուէր փոքրիկ աղք մը , որ ո՛չ միայն չզլացաւ նիւթապէս ու բարոյապէս օժանդակել այլ եւ ամէն տեսակ ասպնջականութիւն ցոյց տուաւ Եւրոպայէն Փոքր Ասիա արշաւող խաչապաշտ ու խաչակիր կրօնակիցներու , որոնք վերջապէս պատճառ դարձան Հայոց թագաւորութեան իսպա՛ռ կործանուելուն . . .

Ըսէ՛ք , կաղաչեմ , սիրելի՛ ընթերցողներս , ի՞նչ մեծ գործ կատարեցին Խաչակիրները . իրենց փառասիրական կամ թէ ըսենք կրօնասիրական ձգտումներուն ծառայելէ ուրիշ ի՞նչ օգուտ ունեցան մարդկութեան . իրենց անցած բոլոր քաղաքներուն ու գիւղերուն աւերո՞ւմը , թալա՞նը , հրդե՞հը , կոտորա՞ծը , սո՞վը , ժանտա՞խտը . . . Գոնէ՛ իրենց նպատակին հասնէի՞ն . գոնէ՛ Սուրբ Երկրին աէր դառնայի՛ն : — Ո՛չ : Առժամանակեայ փոքրիկ յաջողութենէ մը ետքը բոլորն ալ մարեցան , ինկան , անհետացան , եւ Սուրբ Երկիրը մնաց ու կը մնայ դարձեալ մահմէդականներու ձեռքը :

* * *

Այս երկու ժամանակագիրներէ դուրս՝ ձեռագրի մը յիշատակարանն ալ մեկ *սարի* կը դնեմ Լեւոնի իշխանութիւնը . — « Ի բուականութեանս Հայոց Պի՛ի առաւ Սիս ի Բիսոսնէից . . . եւ եր քազաւոր Հայոց Պր. Լեւոն՝ որդի Բրնձին . սա քազաւորեաց Հայոց ամ մի : » (*Հայաստանու*, եր. 542) :

Նոյնպէս Չամչեանի , Դիւլորիէի եւ այլոց հետեւելով ընդունուած է , քե Լեւոն երկու *սարի* փառուած պահուրսած է Տաւրոսի անառիկ եւ բոլորովին անձանօք բախտոցներէն մեկին մեջ , երեսի վրայ ձգելով արժուցի գահն ու Հայոց քազուհին «Մարիամ»ը . իսկ իշխանները մեռած կարծելով Լեւոնը , ուզած են Մարիամն ամուսնացնել Բրունավիի դուստր Որոնի հետ , բայց Լեւոնի յանկարձական յայտնուիլը վերջ տուած է բոլոր կասկածներու եւ ծրագիրներու : Արդ՝ ուրիշ տեղ (եր. 40, ծանօթ. 2) տեսանք , որ Մարիամ Լեւոնի կինը չէր , այլ Կոստանդին Գ-ի . ապացոյց՝ Մարիամը Որոնի հետ ամուսնացնելու ծրագիրը , որ յայտնի է մեզ Գրիգոր ԺԱ պապին առ Փիլիպպոս Գ ղրկած քղթէն . (տե՛ս եր. 34) : Այս ամենէն բացարձակ կերպով կը տեսնուի , որ ո՛չ միայն խոռո պիսպնեւ սպրդած են Լեւոնի պատմութեան մեջ , այլ եւ Մարիամն ու Մարգարիտը օրոքած են իրարու հետ :